

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Հանրային տիրույթում մարդկային փոխհարաբերությունների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների և համացանցային տիրույթի մշտադիտարկումը վկայում է հայիոյանք և ծանր վիրավորանքի այլ դրսևորումներ պարունակող բառապաշարի համատարած օգտագործման և դրա հետևանքով մարդկային փոխհարաբերությունների որակազրկման, այդ բառապաշարի թիրախավորված օգտագործման հետևանքով անձի կամ անձանց խմբի նկատմամբ ճնշում գործադրելու փորձերի և դրանց հետևանքով առաջ եկող այլ անցանկալի երևույթների մասին:

Մասնավորապես, հանցավորության վիճակի խորքային վերլուծությունը ցույց է տալիս, որ բռնությամբ կատարված բազմաթիվ հանցագործությունների շարժառիթը կոնֆլիկտներն ու անհամաձայնությունները քաղաքակիրթ եղանակով լուծելու մշակույթի բացակայությունն է, դրա փոխարեն կողմերից մեկի դրսևորած վարքագիծը՝ ուղղված մյուսի արժանապատվությունը կոպտորեն վիրավորելուն: Այլ կերպ ասած՝ բազմաթիվ հանցագործություններ կատարվում են տուժողի կողմից դրսևորված հակաիրավական կամ հակաբարոյական վարքագիծի պատճառով՝ արտահայտված հետագայում նրա նկատմամբ հանցանք կատարած անձի ամենանուրբ զգացմունքները վիրավորելու նպատակով նրան հայիոյանք կամ այլ ծանր վիրավորանք հասցնելով, արժանապատվությունն այլ անպարկեշտ եղանակով վիրավորելով:

Ուսումնասիրությունները վկայում են նաև, որ շեշտակիորեն նվազել է հանրային իշխանության և ընդհանրապես հանրային գործունեություն ծավալող անձանց նկատմամբ հարգանքը, ինչի վկայությունն այն է, որ հաճախակիացել են դեպքերը (հաճախ նաև համացանցի միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով), երբ անձին վիրավորում են՝ կապված վերջինիս լրագրողական կամ հրապարակախոսական գործունեության կամ ծառայողական պարտականությունների կատարման կամ հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ: Ընդ որում, դա դրսևորվում է հաճախ հրապարակայնորեն և ամենակարևորը՝ ուղղակիորեն պայմանավորված է լինում տվյալ անձի հանրային գործունեությամբ: Այսինքն, անձին վիրավորում են ոչ թե նրան դիտարկելով որպես իրավահարաբերությունների մասնավոր սուբյեկտ, այլ որպես հանրային գործունեություն իրականացնող անձի:

Թեև արձանագրված խնդրի ամբողջական լուծումը պահանջում է մշակույթի փոփոխությանն ուղղված գաղափարական-դաստիարակչական երկարաժամկետ և ծավալուն աշխատանք, սակայն խնդրի բնույթը, ծավալներն ու տարածման միտումները, վկայելով դրա դեմ պայքարի առկա իրավական միջոցների անբավարար արդյունավետության մասին, անհրաժեշտություն են առաջացնում միջոցներ ձեռնարկել այն կատարելագործելու ուղղությամբ՝ թույլ տալով պնդել, որ այդ միջոցը վարքագծի վերը

նշված կոնկրետ դրսևորումների համար համաչափ քրեական պատասխանատվություն նախատեսելն է:

Ինչպես գործող, այնպես էլ նոր ընդունված և դեռևս չգործող ՀՀ քրեական օրենսգրքերով, որպես քրեական օրենսդրության առաջնային նպատակ, առանձնացվում է հանցագործությունների կանխումը: Քրեական օրենսգիրքը պետք է ապահովի քրեադատավարական համաչափ գործիքակազմի միջոցով մասնավոր և հանրային շահերի համաչափ պաշտպանությունը դրանց նկատմամբ ոտնձգություններից: Իսկ հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս միտումները, հանցավորության շարժընթացի վերլուծությունը, քրեական օրենսդրության նախականիսիչ գործառույթի պատշաճ իրացման հանրային ակնկալիքները պայմանավորում են նմանատիպ երևույթների դեմ քրեաիրավական գործիքակազմի միջոցով պայքարելու անհրաժեշտությունը: Նշված երևույթների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը, այդ թվում նաև քրեաիրավական գործիքակազմի ներդրման միջոցով, խիստ անհրաժեշտ է հայիոյանք և ծանր վիրավորանքի այլ դրսևորումներ պարունակող բառապաշարի համատարած օգտագործման հետևանքով բռնության և ինքնադատաստանի դրսևորումները, հասարակության բևեռացումը կանխելու, հանրային համերաշխությունը վերականգնելու տեսանկյունից:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև 2021թ. հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված այն իրավական դիրքորոշմամբ, որի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ վերլուծված՝ վարչապետի սահմանադրական կարգավիճակը և լիազորությունների ծավալը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության պայմաններում, ինչպես նաև քաղաքական մեծամասնության ունեցած ազդեցությունը հանրային իշխանության մարմինների համակարգում, ընդգծում է **նրանց կողմից գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը** հայաստանյան քաղաքական խոսքում՝ ալտերության, բռնության, **վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքի և վարքագծի որևէ դրսևորում**, ներառյալ նաև նախընտրական քարոզչության ժամանակ հնչեցվող խոսքում **բացառելու նպատակով** [ընդգծումը մերն է]:»: ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումը ընդգծում է հանրային իշխանության հստակ պոզիտիվ պարտականությունը՝ պայքարելու վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու երևույթների դեմ գործուն միջոցառումներ ձեռնարկելով, որպիսին ստեղծված իրավիճակում կարող է հանդիսանալ ծանր վիրավորանքի քրեականացումը:

Հատկապես անհրաժեշտ ենք համարում փաստել, որ նախագծով առաջարկվող իրավակարգավորումները որևէ առնչություն չունեն քննադատության, որպես առհասարակ վարքագծի և հատկապես՝ հանրային գործունեության վրա բացառապես դրական ազդեցություն ունեցող ու անհրաժեշտ երևույթի հետ և նախագիծը չի կարող քննարկվել դրա տիրույթում: Հայիոյանքն ու ծանր վիրավորանքը որևէ աղերս չունեն քննադատության հետ և չեն կարող ասոցացվել դրա հետ, դիտարկվել որպես քննադատության միջոց: Անձին ծանր վիրավորանք հասցնելը չի կարող դիտարկվել որպես նրա վարքագծի հետ անհամաձայնության, դրա մասին կարծիքի արտահայտման ձև, հայիոյանքը չի կարող գնահատվել որպես կարծիք, դրա ճշմարտացիությունը չի կարող քննարկվել ոչ առհասարակ և ոչ էլ դրա հասցեատիրոջ իրավաչափ կամ ոչ իրավաչափ վարքագծի հետ համադրությամբ: Հետևաբար, Նախագծով առաջարկվող

իրավակարգավորումները ոչ միայն ուղղված չեն խոսքի ազատության սահմանափակմանը, այլ ընդհակառակը մեծապես կարող են նպաստել խոսքի ազատության իրավունքի պատշաճ իրացմանը:

Հարկ է ընդգծել, որ Նախագծով նախատեսված ծանր վիրավորանքի հասարակ հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործեր կարող են հարուցվել ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման, այլ խոսքով՝ հանդիսանում են մասնավոր մեղադրանքի գործեր (տե՛ս «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը): Նախագծով նախատեսված ծանր վիրավորանքի որակյալ հանցակազմերով նախատեսված հանցագործությունները հանրային մեղադրանքի գործեր են, ենթակա են հարուցման՝ անկախ տուժողի բողոքի առկայությունից:

Նախագծով որպես ծանր վիրավորանքի հանցակազմի ծանրացնող հանգամանք է նախատեսվել ***անձին իր հանրային գործունեության կապակցությամբ ծանր վիրավորելը***, ինչի հիմք է ծառայել վերջին ժամանակներս բավականին հաճախակիացած դեպքերը, երբ նմանատիպ երևույթների թիրախ են դառնում լրագրողները, իրավապաշտպան ակտիվիստներ, տարբեր սոցիալական խմբերին պատկանող անձինք, քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներ: Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների ընդունման պարագայում վերջիններիս համար կստեղծվի լրացուցիչ երաշխիք՝ իրացնելու հանրային հսկիչի (ՄԻԵԴ եզրութաբանությամբ՝ public watchdog) իրենց գործառույթները՝ առանց հնարավոր թիրախավորման և իրենց գործունեության հետ կապված այլ բացասական երևույթների:

Պետք է շեշտել, որ անձին նրա կողմից իրականացվող հանրային գործունեությամբ պայմանավորված վիրավորելն առանձնանում է հանրային վտանգավորության ավելի բարձր աստիճանով՝ նկատի ունենալով, որ այն տվյալ դեպքում ոչ միայն նվաստացնում է կոնկրետ անձի արժանապատվությունը, որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք և հետևաբար հատուկ պաշտպանության ենթակա բարիք, այլ նաև վնասում տվյալ անձի կողմից իրականացվող գործունեությանը, ազդում դրա արդյունավետության վրա՝ այն իրականացնող անձին ճնշելու, կաշկանդելու միջոցով: Անձին նրա կողմից իրականացվող հանրային գործունեությամբ պայմանավորված ծանր վիրավորանք հասցնելը հստակ ուղղված է այդ գործունեությանը խոչընդոտելուն, այն դադարեցնելուն կամ դրա համար վրեժ լուծելուն: Նմանօրինակ վարքագիծն ուղղակիորեն նսեմացնում է հանրային ինստիտուտների, իրավապաշտպան, լուսաբանող, հանցավոր կամ այլ անթույլատրելի երևույթների դեմ պայքար ենթադրող գործունեության, այն իրականացնող անձանց, պետական մարմինների հեղինակությանը:

Անհրաժեշտ ենք համարում վերոգրյալի համատեքստում փաստել նաև, որ անձին նրա հանրային գործունեությամբ պայմանավորված ծանր վիրավորանք հասցնելը որպես առավել վտանգավոր դիտելն ու դրա համար ավելի խիստ քրեական պատասխանատվություն նախատեսելը որևէ կերպ չի կարող գնահատվել որպես խտրական վերաբերմունքի դրսևորում, առանձին խմբերի ավելի բարձր պաշտպանության երաշխավորում, նկատի ունենալով, որ այն ինքնանպատակ չէ, պայմանավորված է ոչ թե ինքնին նրանց կողմից հանրային գործունեություն իրականացնելու հանգամանքով, այլ նրանով, որ ծանր վիրավորանքը կապված իրականացվող հանրային գործունեության հետ, նպատակ ունի խոչընդոտել այդ գործունեությանը և այդ կերպ անձի արժանապատվությունից բացի վնասում է պաշտպանության ենթակա լրացուցիչ բարիք: Այլ կերպ ասած՝ նախագիծը ավելի

վտանգավոր է համարում ոչ թե ինքնին լրագրող կամ Ազգային ժողովի պատգամավոր հանդիսացող անձին ծանր վիրավորանք հասցնելը, այլ ծանր վիրավորանքը հենց այդ անձանց համապատասխանաբար լրագրողական կամ օրենսդիր գործունեությամբ պայմանավորված հասցնելը, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում արարքն ուղղված է այդպիսի գործունեությանը խոչընդոտելուն կամ դրա համար վերժ լուծելուն և պաշտպանության ենթակա է ոչ միայն նման գործունեություն իրականացնող անձի արժանապատվությունը, այլև այդ գործունեությունը, դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմանները: Նույն ոչ խտրական մոտեցմամբ է պայմանավորված բուժաշխատողների, լրագրողների և հանրային գործունեություն իրականացնող այլ անձանց նկատմամբ բռնություն գործադրելու, Մարդու իրավունքների պաշտպանին վիրավորելու համար առանձին քրեական պատասխանատվություն նախատեսված լինելը:

Ի հիմնավորումն նախագծի՝ անհրաժեշտ ենք համարում մեջբերել հատկապես լրագրողների թիրախավորման և վիրավորելու դեպքերը բացառելու անհրաժեշտությունը հիմնավորող վերջին զարգացումները: Այս առումով հիշարժան է հատկապես Սլովենիայի նախկին վարչապետի կողմից «Թվիթեր» սոցիալական ցանցի իր օգտահաշվում երկու լրագրողների հրապարակային վիրավորելու դեպքը, ինչին անմիջապես հետևեց ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Դ. Միայտովիչի կոշտ արձագանքը:¹ Դ. Միայտովիչը մասնավորապես ընդգծել էր նմանատիպ երևույթների, ի թիվս այլնի, լրատվության ազատության իրավունքի իրավաչափ իրացման նկատմամբ խանգարող ազդեցությունը (chilling effect):

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև խնդրո առարկա կարգավորումների համապատասխանությանը ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված կարծիքի արտահայտման ազատության և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատության իրավունքի պատշաճ իրացմանը: Նախ անհրաժեշտ է հաշվի առնել, որ երկու հոդվածներով էլ սահմանված իրավունքները կարող են սահմանափակվել, ի թիվս այլնի, այլոց պատվի և բարի համբավի պաշտպանության նպատակով: Տվյալ իրավիճակում անհրաժեշտ է հաշվի առնել, որ թեև ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ պաշտոնատար, այդ թվում՝ քաղաքական գործունեություն իրականացնող անձինք անխուսափելիորեն և գիտակցաբար իրենց յուրաքանչյուր արարք և խոսք հանձնում են հասարակության և լրագրողների դատին, հետևաբար՝ նրանք պետք է ցուցաբերեն հանդուրժողականության բարձր մակարդակ, սակայն ՄԻԵԴ նախադեպային իրավունքում առկա չէ գեթ մեկ վճիռ, որտեղ ծանր վիրավորանքը քրեականացնող օրենսդրության առկայությունն ինքնին դիտարկվի որպես խնդրահարույց Կոնվենցիայի 10-րդ հոդվածի տեսանկյունից: ՄԻԵԴ նախադեպային իրավունքի տրամաբանությունը կայանում է նրանում, որ արտահայտվելու իրավունքի միջամտությունը պետք է համապատասխանի սահմանված եռաստիճան թեստին՝

- արդյոք միջամտությունը նախատեսված էր օրենքով,
- արդյոք հետապնդում էր իրավաչափ նպատակ,
- արդյոք անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում:

¹ Հասանելի է <https://www.coe.int/en/web/commissioner/-/slovenian-authorities-should-halt-the-deterioration-of-freedom-of-expression-and-media-freedom> հղմամբ:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ հատկապես վերջին չափանիշին, որը ՄԻԵԴ նախադեպային իրավունքի տրամաբանության համաձայն՝ դիտարկվում է որպես միջամտության համար «ճնշող հանրային պահանջի» (pressing social need) առկայության անհրաժեշտություն: Այս առումով ուղենշային կարող ենք համարել *Յանովսկին ընդդեմ Լեհաստանի* գործով (Janowski v. Poland, app. no. 25716/94, 21 January 1999) ՄԻԵԴ արտահայտած իրավական դիրքորոշումները, երբ մունիցիպալ հսկիչներին «անշնորհք» (oaf) և «համր» (dumb) անվանած անձին քրեական պատասխանատվության ենթարկելը **չդիտարկվեց իբրև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուի խոսքերը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի վերաբերյալ բաց քննարկման մաս չեն կազմում տվյալ իրավիճակում, հետևաբար մամուլի ազատության հարց չեն բարձրացնում** (the Court notes that the applicant was convicted of insulting the municipal guards by calling them “oafs” and “dumb” during an incident which took place in a square. It was witnessed by bystanders and concerned the actions of municipal guards who insisted that street vendors trading in the square move to another venue. The applicant’s remarks did not therefore form part of an open discussion of matters of public concern; neither did they involve the issue of freedom of the press since the applicant, although a journalist by profession, clearly acted as a private individual on this occasion.):

Անհրաժեշտ ենք համարում կրկնել, որ հանրային գործունեության կապակցությամբ ծանր վիրավորանքը էապես խոչընդոտում է այդ գործունեությանը, ազդում դրա արդյունավետության վրա և հետևաբար, համարժեք իրավական արձագանք է ենթադրում: Կրկնության է արժանի նաև, որ Նախագիծը բացարձակապես միտված չէ խոսքի ազատության, մասնավորապես՝ հանրային իշխանության նկատմամբ քննադատության, հանրային հետաքրքրություն ներկայացնող ցանկացած հարցի վերաբերյալ արտահայտվելու ազատության իրավունքների իրացմանը խոչընդոտելուն, քանի որ նախ, ծանր վիրավորանքը չի կարող տեղավորվել խոսքի ազատության իրավունքի տիրույթում, և նախագիծը քրեաիրավական ներգործություն է ենթադրում միայն այն ժամանակ, երբ որոշակի արտահայտությունները կամ գործողություններն անցնում են թույլատրելի քննադատության (acceptable criticism) սահմանները՝ առաջացնելով պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու այլոց պատիվն ու արժանապատվությունը:

Արտասահմանյան, մասնավորապես եվրոպական պետությունների վերաբերելի իրավակարգավորումների ուսումնասիրությունը ևս վկայում է, որ պետությունների ճնշող մեծամասնությունում այս կամ այն կերպ պահպանվել են վիրավորանքը քրեականացնող նորմերը: Մասնավորապես, Արտահայտվելու ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դ. Միյատովիչի (ներկայումս՝ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար) «Զրպարտությանը և վիրավորանքին վերաբերող օրենքները ԵԱՀԿ տարածաշրջանում. համեմատական ուսումնասիրություն» վերտառությամբ 2017թ. մարտին հրապարակված զեկույցում² նշված է, որ ԵԱՀԿ 57 անդամ պետություններից 42-ում դեռևս առկա են զրպարտությունը և վիրավորանքը քրեականացնող նորմեր, ընդ որում՝ դրանց ճնշող մեծամասնությունում որպես պատիժ է սահմանված նաև ազատազրկումը: 15 պետությունների շարքում, որոնցում վիրավորանքը և զրպարտությունը ապաքրեականացված են, գտնվում են Հայաստանը, Բոսնիան և Հերցեգովինան,

² Հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/b/8/303181.pdf> հղմամբ:

Կիպրոսը, Էստոնիան, Վրաստանը, Իռլանդիան, Ղրղզստանը, Մոլդովան, Չեռնոգորիան, Նորվեգիան, Ռումինիան, Տաջիկստանը, Հյուսիսային Մակեդոնիան, Միացյալ Թագավորությունը և Ուկրաինան: Ընդ որում շուրջ 16 պետություններ քրեական պատասխանատվություն են սահմանում իշխանության ներկայացուցիչներին իրենց գործառույթների իրականացման կապակցությամբ վիրավորելու համար:

Մասնավորապես, **Չեխիայի** քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում զրպարտության համար: Զրպարտությունը սահմանվում է որպես անձի վերաբերյալ կեղծ տեղեկատվություն ներկայացնել, որը կարող է լրջորեն վտանգել հասարակության շրջանում վերջինիս հեղինակությունը: Այդ արարքը պատժվում է տուգանքով կամ մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ: Ընդ որում, 2009-2014թթ. նշված հոդվածով դատապարտվել են 23 անձ, որից 22-ը՝ ազատազրկման:

Դանիայում քրեականացված են վիրավորանքը և զրպարտությունը (քրեական օրենսգրքի 267 և 270-րդ հոդվածներ), պաշտոնատար անձին և պետության գլխին զրպարտելը (քրեական օրենսգրքի 121-րդ և 115-րդ հոդվածներ): Արարքը պատժվում է ինչպես տուգանքով, այնպես էլ ազատազրկմամբ: 2014թ. պաշտոնատար անձանց վիրավորելու համար դատապարտվել է 43 մարդ, որից 7-ը՝ ազատազրկման:

Գերմանիայի քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածը ևս քրեական պատասխանատվություն է սահմանում վիրավորանքի համար՝ որպես պատիժ նախատեսելով տուգանք կամ մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկում: 2013թ. ընթացքում վերոհիշյալ հոդվածով դատապարտվել է 21454 անձ:

Հունաստանի քրեական օրենսգրքով վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն է սահմանված 316-րդ հոդվածով: Որպես պատիժ է սահմանված կալանքը և տուգանքը: 2010թ. ընթացքում հիշյալ հոդվածով դատապարտվել է 561 անձ:

Իսլանդիայի քրեական օրենսգրքի 234-րդ հոդվածը ևս նախատեսում է քրեական պատասխանատվություն վիրավորանքի համար: Որպես պատիժ նախատեսված է ինչպես ազատազրկում, այնպես էլ տուգանք:

Լյուքսեմբուրգի քրեական օրենսգրքի 448-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում հրապարակային վիրավորանքի համար: Որպես պատիժ է նախատեսված ազատազրկումը 8 օրից 2 ամիս ժամկետով կամ տուգանքը մինչև 500 եվրո:

Լեհաստանի քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում վիրավորանքի, իսկ 226(1)-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձին իր պաշտոնական պարտականություններին իրականացնելու կապակցությամբ վիրավորելու համար: Որպես պատիժ է նախատեսված տուգանքը կամ ազատազրկումը մինչև մեկ տարի ժամկետով: 2013թ. կտրվածքով 216-րդ հոդվածով դատապարտվել են 71 անձ, որից 26-ը՝ ազատազրկման, իսկ 226(1)-րդ հոդվածով դատապարտվել է 3666 անձ, որից 1013-ը՝ ազատազրկման:

Պորտուգալիայի քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում վիրավորանքի, իսկ 183-րդ հոդվածը՝ ՁԼՄ-ներով վիրավորանքի համար: Որպես պատժատեսակ կրկին նախատեսված են տուգանքը և կարճաժամկետ ազատազրկումը: 2013թ. կտրվածքով երկու հոդվածներով կայացվել է 576 մեղադրական դատավճիռ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք զարգացած ժողովրդավարական ավանդույթներ ունեցող արևմտաեվրոպական մի շարք երկրներում նմանատիպ օրենքները պրակտիկայում բավականին հաճախ են կիրառվում: Այս առումով հիշատակության է

արժանի նաև Նիդերլանդների Թագավորությունում մի ակտիվիստի նկատմամբ Նիդերլանդների թագավոր Վիլեմ-Ալեքսանդրին հայտոյելու համար իրականացված քրեական հետապնդումը, ինչպես նաև 2007 թվականին Իսպանիայի թագաժառանգ Ֆելիպեին և իր կնոջը ծաղրանկարի միջոցով (արքայազնը և իր կինը պատկերված էին սեռական հարաբերություն ունենալիս) պատկերելու համար Էլ-Խուեվես երգիծական հանդեսի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը:

Անդրադառնալով այն հարցին, որ արդեն իսկ առկա են վիրավորանքի և զրպարտության դեմ պայքարին ուղղված իրավակարգտավորումներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, անհրաժեշտ է փաստել, որ առնվազն ՀՀ սահմանադրական դատարանի վերը մեջբերված իրավական դիրքորոշումը վկայությունն է առկա իրավակարգավորումների արդյունավետության պակասի, այդ կապակցությամբ նոր գործիքակազմ սահմանելու անհրաժեշտության:

Անհրաժեշտ ենք համարում փաստել նաև, որ նույն կամ մասամբ համընկնող երևույթից միաժամանակ քաղաքացիաիրավական և քրեաիրավական պաշտպանության միջոցներ նախատեսված լինելն ինքնին խնդրահարույց չէ: Այս կապակցությամբ հիշատակման է արժանի ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. ապրիլի 5-ի ՍԴԴ-947 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն այն մասին, որ «(...) ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլուծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջև դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետևանքով իրավունքների և ազատությունների **խախտումների կանխման** խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրության դեպքում օրենսդիրն իր առջև դրել է **խախտված իրավունքների վերականգնման** ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքացիական դատավարության կարգով նշված իրավունքների վերականգնման համար նախադրյալներ հանդիսացող նորմեր: Այդպիսիք են, մասնավորապես, դիմողի կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 և 313-րդ հոդվածները, որոնք նախադրյալներ են հանդիսանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքի կամ ստրկացուցիչ գործարքի հետևանքով խախտված իրավունքները քաղաքացիական դատավարության կարգով վերականգնելու համար:

Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունքների վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականիսչ նշանակություն և քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները: Այդ է պատճառը նաև, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտը, որի միջոցով գործնականում ապահովվում է հանցագործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնումը:

Վերոգրյալից բխում է, որ կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական և քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, և դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ.

քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը:

Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վտանգավորության գնահատումը և դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը և ելնելով վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից»:

Նույն մոտեցումն են հաստատում նաև *Լիա Ավետիսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն ու դրանց հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկան, որոնք վկայում են, որ քաղաքացիաիրավական գործարքը կարող է հանդիսանալ խարդախության միջոց և դրանից տուժած անձի կողմից քաղաքացիաիրավական պաշտպանության գործիքակազմի նախաձեռնումը խարդախության հանցակազմն ինքնին չի բացառում:

Ամփոփելով վերոգրյալը հարկ ենք համարում հատուկ շեշտադրել մի քանի հանգամանքներ.

- Նախագծով սահմանված իրավակարգավորումները չեն նույնանում ՀՀ քրեական օրենսգրքից ապաքրեականացված՝ իշխանության ներկայացուցչին վիրավորելու ինստիտուտի հետ (նախկին 318-րդ հոդված), քանի որ Նախագծով իրավական պաշտպանության ենթակա անձանց ավելի լայն շրջանակ է ներառված,

- Նախագծով քրեաիրավական պաշտպանության տակ է դրվում անձի արժանապատվությունը քննադատության հետ չնույնացող ծանր վիրավորանքից, իսկ ավելի խիստ պաշտպանության տակ է դրվում հանրային գործունեությունը, այն է՝ լրագրողական, հրապարակախոսական գործունեության, ծառայողական պարտականությունների կատարման, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված վարքագիծը, ինչն ուղղված է չեզոքացնելու այդպիսի գործունեությանն ուղղակիորեն հարվածող, քննադատության սահմաններում չտեղավորվող հայհոյանքն ու ծանր վիրավորանքի այլ տեսակները,

- Նախագիծը նպատակ չունի և չի կարող փոխարինել քաղաքացիաիրավական հարաբերություններով կարգավորվող վիրավորանքի և զրպարտության ինստիտուտին, քանի որ, դրա համար քաղաքացիաիրավական և քրեաիրավական պատասխանատվությունը հետապնդում են տարբեր նպատակներ, ավելին, ինչպես նշվեց, այն մասնավոր իրավական բնույթ ունի, և քրեական պատասխանատվություն է սահմանվում վիրավորանքի առավել ծանր դրսևորումների համար,

- Նախագծով սահմանված իրավակարգավորումները չեն խախտում խոսքի ազատության իրավունքի՝ միջազգայնորեն ճանաչված թույլատրելի սահմանները, համադրելի են միջազգային փորձի և ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների հետ և կոչված են ապահովելու հանրային համերաշխության վերականգնումը և հասարակության բեռնացման կանխումը, ինչպես նաև ապահովելու անձանց պատվի և արժանապատվության պաշտպանությունը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Վերոնշյալ երկու խնդիրների կարգավորման նպատակով Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքը լրացնել նոր՝ 137¹ հոդվածով, որով կքրեականացվի անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայհոյելը կամ նրա արժանապատվությունն այլ անպարկեշտ, լկտի եղանակով վիրավորելը: Որպես

հանցակազմի որակյալ տեսակ նախատեսվել է նշված արարքը, ինչպես նաև անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութեր տարածելը, որը կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով կատարելը, իսկ որպես առավել որակյալ տեսակ՝ նշված արարքները անձի հանրային գործունեությամբ պայմանավորված կամ միևնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար կատարելը:

Ընդ որում, Նախագծում նախատեսվում է հստակեցնել հանրային գործունեության հասկացությունը: Այսպես, հանրային գործունեություն է համարվում անձի կողմից լրագրողական, հրապարակախոսական գործունեության, ծառայողական պարտականությունների կատարման, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված վարքագիծը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ քրեաիրավական առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ կնախատեսվեն անձանց պատվի և արժանապատվությանը սպառնացող առավել վտանգավոր դրսևորումների համար համար: